

ժամանակ: Ամբարյան տօթագին օրերին հունձ անելը տա-
ժանելի է շատ, ուստի եւ եւելտրական օղապարիկ լամ-
պարի շնորհիւ այսուհետեւ այնտեղ հունձը գիշերները կա-
նեն, որ զով է լինում:

Մթնոլորտի ղեւձ կոտրելով մարդս շատ միջոցներ է
հնարել, սակայն երկի շատ քչերը գիտեն, որ խաղաղական
ովկիանոսի կղզիների բնակիչները մեր գործ դրած լուսա-
որութեան միջոցներէք եւ ոչ մէկից էլ չեն օգտուում, այլ
ունին լուսոյ մի շատ բնական աղբիւր: Վանկուների կղզում
բնակիչները Ծրագի տեղ այրում են մի տեսակ մանր ձկն-
ներ, որ յատկապէս այդ կղզու շրջակայ ջրերումն են լի-
նում: այդ ձկան գիտական անունն է *Thaleichthys paci-*
ficus. Մի այդպիսի յատկութիւն ունի եւ մի այլ ձուկն, որ
կոչուում է *Eulalon*. Ուս շորացնելուց յետոյ Ծրագի տեղ
վառում են: Փէրոյէ կղզում կայ մի տեսակ թռչուն, որ
նոյալէս Ծրագի տեղ վառուում է:

Բժիշկները շատ են զբաղուել այն խնդրով թէ ար-
դեօք յոբախի զգեստներն հեշտութեամբ են վարակիչ հիւան-
դութիւնների բակտերիաներ ընդունում են յոբախից ոչ: Բուս
բժիշկ Նիկոլսկու հետազոտութիւններից երևում է, որ բոլրէ
զգեստներն աւելի յարմար են բակտերիաներ ընդունելու
համար, իսկ կտաւէ եւ քաթմանէ կտորները աւելի պակաս
են զբառում բակտերիաներին: Ամենից յարմար կտորն հա-
մարուում է քաթմանը:

ՎԻՃԱԿԱՅԻՆՈՒԹՅԱՆ.

Վիճակագրողներից ոմանք թղթի գործածութիւնը ազ-
գերի լուսաւորութեան շափն են համարում եւ արդարեւ վի-
ճակագրական փորձերը ցոյց են տալիս, որ ամենից լուսա-
ւոր ազգերն ամենից շատ թուղթ են գործ դնում: Ամե-
նից շատ թուղթ գործ են դնում անգլիացիք, ամէն մի:
անգլիացու վրայ տարեկան 16 գրուանքա թուղթ է գալիս
Միւս ազգերի գործ դրած թղթի քանակութիւնները բաժան-
նելով ամբողջ ազգի թուի վրայ, ստանում ենք, որ ա՛ւր
մի ամբողջացի գործ է դնում տարեկան 45 գրուանքայ,
ամէն մի գերմանացի—14, գաղղիացի—10, իտալացի եւ
աստրիացի—5 գ. եւ սլաւոնացի 4 1/2 գր:

ԱՄԱՆԱԶԱՆՈՒԹՅԱՆ.

Ի՛նչ է քաղաքագիտական բարոյականութիւնը. անս
մի խնդիր, որով շատերն են զբաղուել. «Revue des Revues»
թերթի № 25-ում յայտնի իտալացի գիտնական Սցիպիո
Սեզզէն մի յօդուած է հրատարակել, որի վերնագիրն է.
«Անճանական եւ քաղաքական բարոյականութիւն»: Այս
յօդուածի մէջ յառաջ են բերուած մի քանի կարծիքներ
իրքեւ փաստ այն վաղուց յայտնի Եմարտութեան համար,
որ քաղաքականութիւնը բարոյականութիւն չունի:

Մի իտալացի պատգամաւոր ամուսնալուծութեան
մասին հետեւեալն է արտայայտում.

— Ինչպէս մարդ, ես ամուսնալուծութեան կամակից
եմ, իսկ իրքեւ պատգամաւոր, հակառակորդ:

Փրանսիացի ամէն մի ներքին պաշտօնեայ իրքեւ մարդ
եւ քաղաքացի դատաւարտում է հասարակաց կարծիքի
ընդաբարութիւնը, սակայն ամէնցն էլ իրքեւ նախարար
գաղտնի դրամագլխով սողուն թերթին են պահում, իրենց
ընթացքը պաշտպանել տալու համար:

Անգլիացի Նշանաւոր եկեղեցականներից մէկն առանց
երկիւղի հետեւեալ սկզբունքն է քարոզում. «Ես այն դաս-
տիարակութեան պաշտպանն եմ, որ իւրաքանչիւր անգլիա-
ցուն պատերազմի համար է պատրաստում, որպէս զի Նը-
ժօ ամէն մէկն մեռնելուս անգամ խոցոտէ իւր վրայ

յարձակողներին, ինչպէս աղուէսը, որ շներէք ըկծուելով
սատակում է իւր թշնամիներին խաճատելով»:

Պատուիրանն ասում է. «մի գողանար», սակայն
օտար երկրներին տիրելը, որ մի հաւաքական գողութիւն է,
փառք է համարուում քաղաքականութեան մէջ, ասում է
Սեզզէն: «Մի սպանանար», ասում է պատուիրանը, սա-
կայն Բրուտոսներն ու Եառլոտ Կորդին հերոսներ են համար-
ուում: «Մի սուտ վկայիր», պատուիրում է Աստուած, քայք
ամբողջ քաղաքագիտութիւնը ստութեան վրայ է հիմնուած:

Մի ծերունի դեսպան, որ ամբողջ կենսւք քաղաքա-
գիտութեան էր նուիրել, այսպէս որոշեց իւր արուեստը.
— քաղաքագիտութիւնն է խաբէրայութիւն, վաճառականու-
թիւն եւ յաճախ աւազակութիւն (*Chantage, marchandage*
et souvent de brigandage):

ԳՐԱՆԵՆԿԱՆ.

«Revue des Revues» հանդիսի համար 25-ում Թարգ-
մանուած են Գամառ Բաթիպայի ազատ երգերից՝ մի քա-
նիսն. Թարգմանիչն է Տիգրան Երկաթ: Նոյն համարում
Թարգմանուած է Նաեւ Արշակ Զոպանանի «Թաղում».
ոտանաւորը:



Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Երբ երանելին Յովբ փորձանաց հան-
գիպեցաւ, բարեկամներ կուգան մխիթարելու
զինք և երբ կը տեսնան այնպէս վիրալից, աղ-
բիւսի վրայ, շուարած կը մնան, վիշտը կը
փակէ անոնց բերանը, եօթն օր լուռ կը կե-
նան: Այսօր ալ ցաւ հայազգի սիրտ պա-
տեր է, հայն չի գիտեր ի՛նչ անէ. կուզէ խօ-
սիլ չեն թողուր, կը մնայ լալ, ողբալ ու մը-
տածել: Դուք կը լսէք Տաճկաստանի հայոց
կոտորած, անոնց պատահարներ, մի մահա-
րաժամ է, որուն զոհ կերթայ ժողովուրդն:
Հայաստանի խորքերէն, կարիւնէն, Տրապի-
զոնէն, Երզնկայէն, Բաղէշէն և այլ հայա-
բնակ տեղերէն մինչ ի Փոքր-Ասիա և Արիւ-
կիա: Այս բոլոր մենք կիմանանք թէ հեռա-
գիրներ և թէ լրագիրներ կարգալով և զի-
տէք թէ ինչո՞ւ համար է այս կոտորած:
Հաւատոյ համար կը զոհուին հայեր. տաճ-
կի հալածանք քրիստոնէութեան դէմ է և
քրիստոնեայ հայեր կը հալածուին, որովհետեւ
կը բողոքեն իրենց հարստահարութեան հա-
մար: Ենոնց բողոք, դառն զանգատ մինչև
Եւրոպայ, Ամերիկա հասաւ: Եմեն տեղերէ
քրիստոնեայ ազգեր հայի պաշտպանութեան

Համար ձայն բարձրացուցին՝ Ուստիոյ սահմաններում զանուած հայարնակ քաղաքներ Եւմենոպոլիսում Սեւ Կայսեր բարեհաճ թոյլտուութեամբ հանդանակութիւն եղաւ թըշուառ եղբայրների համար, սակայն այս ամենու հետեանք այն էր, որ կոտորեցին հայերուն և կը կոտորեն տակաւին։ Եթէ մեծ ազգեր չլիցան ոչինչ ընել, բարեբաւել հայերուն վիճակի ի՞նչ կրնայ ընել եկեղեցին, մանաւանդ Ուստաստանի Հայոց եկեղեցին իւր որդւոց համար։ Առ մի միջոց չունինք անոնց օգնութեան, բայց միայն աղօթել մեռածների հոգու փրկութեան և թշուառ մնացեալների խաղաղութեան և անդորրութեան համար։ Ես կը հաւատամ, Եստուած երկնից Եթռէն կը լսէ իւր հաւատացեալ փոքրիկ հօտի աղօթքը։ Սեռնողներ ազատուեցան զնացին, մեռնելը մի վայրկեանական բան է և յաւիտեանական ազատութիւն աշխարհի տանջանքէն։ Արանի՛ մեռելոց, որք ի Տէր ննջեցին, այժմիկ ժամանակի։ Կոքա ազատուեցան տաճկի սրէն, հարստահարութենէն, իսկ կենդանի մնացողներ կիսամեռ են, որովհետեւ այսօր հայու հաց, հայու ապրուստ ձեռքէն առել են, կը չքաւորի Հայաստան. ումանք մահուան կը դիմեն և հազարաւորներ պանտրիստութեան ցուպ ձեռքերնին՝ հայածեալ հայրենիքէն օտար աշխարհներ, Եմբրիկա կերթան, թշուառացած է Հայաստան։ Սենալութեանս ատեն ինքս ինձ կը մտածեմ, կասեմ։ Եստուած, արդեօք Հայաստան մեղաւոր է, ինչո՞ւ այսպէս կը լինի, ինչո՞ւ լռել ես, Եստուած, միթէ՛ երկնից պետական Եթռէն չե՞ս զխտել, չե՞ս տեսներ հայերուցաւ, հայերու տանջանք, տրտուջներ մաքէս կանցնին, բայց գիտեմ և կը հաւատամ Եստուծոյ արդարութեանը։ Երբեմն ալ Երեմիա մարգարէն մոխիրներու վրայ նստած կաղաղակեր։ Սեղս մեղաւ Երուսաղէմ, վասն այսորիկ ամենայն գովիչք նորա կոր ի գլուխ առնէին զնա, զի տեսին զանարգանս նորա, զի նա ինքնին յետս դարձեալ յողոց ելանէր։ Գուցէ մեր Հայաստանն ալ իւր

մեղքն ունի։ Եստուած մեղքն արիւնով կը քաւէ, բովանդակ աշխարհի մեղքն ալ Քրիստոս արիւնով սրբեց։ Սի փոքրիկ խաչ և Եստուածորդու անպարտ արեան հեղումն էր, որ փրկեց մարդկութիւնը։ Երեան հետեանքը ազատութիւնն է. հայերն ալ փրկութեան արիւն կը թափեն։ Փրկիչը Եւտարանի մէջ կըսէ. «Եմէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հասն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կեայ, սպա եթէ մեռանիցի բազում արդիւնս առնէ», մեռած հայերու թափած արեան արդիւնքի մասին չկասկածինք, չտարակուսինք։ 15000 հատիկ հայեր որդեր են երկիր իրենց արեամբ, հայու արեան հեղումը վերջ չունի, այսուհետեւ ալ կը թափուի։ Եւ մենք, ինչպէս նաեւ բովանդակ մարդիկ, մարդկօրէն կը մտածենք և սուգ կը պահենք այս ամեն պատահարներու վրայ, մեր դժուարը կը դայ, Եստուծոյ դժուարը չի՞ գայ, ինքն է ամենակարող Եստուածը։ Իրաւ է հայու անտառներ կը կտրտեն, բայց արեւն ալ անձրեւն ալ Եստուծունն են, դարձեալ կաճեցնէ, դարձեալ կը բուսցնէ։ Ենչասպառ կըլլամ կարող չեմ երկար խօսել, համառօտեմ։ Սենք ոչինչ չենք կրնայ ընել, բայց միայն երկու կերպ կրնանք օգնել ձեռք մեկնել և աղօթել։ Օրհնեալ լինի Ուստիոյ տէրութիւն, մասնաւոր հանգանակութեան իրաւունք արդէն տուած է, բայց այս պահուն, որ ներկայ սպառնալիք կը ծանրանայ Հայաստանի վրայ և Եւրոպան ալ կը դժուարանայ, չի գիտեր ի՞նչ անէ, մեր միակ ապաւէնը Եստուծոյ աջն ու հովանին է։ Երկար դարերէ ի վեր եկեղեցին այսպիսի փորձանաց ատեն աղօթել է իւր հօտի փրկութեան համար այժմ մենք ալ պարտաւոր ենք աղօթել ջերմեռանդութեամբ Տաճկաստանի հայ ժողովրդի համար։ Եւ ինչպէս որ Եստուած լսեց Իսրայէլեան ժողովրդի աղաղակը, լսեց Քորեբ լեռան մօտ Մովսէսին, պատուիրեց ազատել այն ժողովրդին ասկւով։ «Տեսանելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ . . . և լուայ աղաղակի նոցա . . . եկ առաքեցից զքեզ . . . և հանցես զժողովուրդ

իմ զորդին Խարայելի յերկրէն Լազիպտացւոց, այնպէս ալ մեր ջերմեռանդ աղօթքը Եստուծոյ Աթոռին կը հասնէ. Կորա ողորմութիւնն անբաւ է: Բոլոր առաջնորդներին զրաժ եմ որ այսօր հոգեհանգիստ կատարեն և երեք օր երեկոցեան ժամին «Տէր ողորմեա՛» ըսեն ամեն եկեղեցիներում: Ուստի, սիրելի ժողովուրդ, մենք ալ ամենայն ջերմեռանդութեամբ իջման Տաճարին մէջ բոլոր հայերու ձայնակցութեամբ առ Եստուած աղաղակենք, Կորա փեշէն բռնենք, Տէր ողորմեա՛ ըսենք, միաբանութիւնն ալ սաղմոսներ կը կարգայ, որ Դաւիթ նեղութեան ատեն առ Եստուած կաղաղակէր:

Զեղ ալ Հարք, կը հրաւիրեմ ամենուր ըստ Պօղոս Բաքեղոյ չլալ ընդ լացողս, զի ժողովուրդ մերն է, կը տառապի, լալ և յամենայն սրտէ և յամենայն հոգւոյ ժողովրդեան հետ ի մի բերան առ Եստուած աղաղակել և ասել. «Ե՛կ, Տէր Յիսուս, ողորմեա մեզ, ողորմութեան ժամ է արդէն: Տէր ողորմեա՛ ըսենք, զի աշխարհիս թագաւորներն ալ այդ պարագաներու մէջ Եստուծուն կը զիմեն: Արկին հրաւիրելով ձեզ կաղաչեմ աղօթել հաւատքով, որ Յիսուս՝ անմահ պատարագեալն այն սուրբ Սեղանի վերայ, որ նստած է իւր երկնից Աթոռոյն վերայ Հօր Եստուծոյ աջ կողմն, բարեխօս լինի Հայոց անօգնական Ազգին համար:



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՒՐ.

Ազգիս Աւհափառ Հայրապետի կարգադրութեամբ ամսոյս սկզբին հոգեհանգիստ կատարուեցաւ մեր տաճկահայ նահատակ եղբարց համար թէ Մայր Աթոռում, և թէ բոլոր վիճակներում, Եստուածային գթութիւնն հայցելու համար Նորին Օծութեան հրամանով բոլոր հայ եկեղեցիներում մի շարաթ շարունակ հսկումներ տեղի ունեցան, Վարդապետի այս համարում ազգային բաժնի տակ յառաջ ենք բերում քաղուածօրէն հայրապետական այս յորդարը, որ խօսուեցաւ հոգեհանգստեան ներկայ ժողովրդին:

Կայսերական Տան ուրախութիւն տօնախմբութիւնների առթիւ գոհացողական մաղթանքներ կատարուեցան Մայր Տաճարում: Առաջ ենք բերում փոխանակուած հեռագիրները:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր.

Նորին Կայսերական Մեծութեան սլա-տասխանը.

Յարսկոյէ Սելօ, 3 Նոյեմբ., 6 ժ. 55. Բ. զննի կէսաւոր.

Է.Ջ.ՄԻԱԾԻՆ.

ԱՌ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ

Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց.

Շնորհ անկեղծ ունիմ վասն շնորհաւորելոյդ զիս: Գանձն առնեմ զնորածինն աղօթից Զերոց:

ՆԻԿՈԼԱՅ.

ՅԱՐՍԿՈՅԷ ՍԵԼՕ.

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐ.

Վասն նորոյ զեղման շնորհացն Եստուծոյ ի վերայ Օգոստոսիառ Տան Մեծութեան Զերոյ, զգացմամբ ամենախորին աճանաւորութեան՝ ի հոգի շնորհաւորեմ զաճումն Կայսերական գերդաստանիդ, վերառաքելով առ Տէր Եստուած ջերմեռանդն աղօթս վասն ըղձալի քաջառողջութեան Օգոստոսիառ Մնողին և բարձրը նորածին Օլգա Մեծի իշխանուհւոյն:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԵ ՀԱՅՈՑ.
3 Նոյեմբ. 1895.

ՅԱՐՍԿՈՅԷ ՍԵԼՕ.

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳՈՒՀԻՈՅ ԿԱՅՍՐՈՒՀԻՈՅ

ՄԱՐԴԱ ՓԷՕԴՈՐՈՎՆԱՅԻ.

Խնդակցեալ ուրախութեան եկեղեցակահաց իմոց և համայն հօտիս, առաջի առնեմ զանձնանուէրն իմ շնորհաւորութիւն վասն աւուր ծննդեան Զերդ Մեծութեան և սղօթեմ առ Բարձրեալն, զի շնորհեացէ Զեղ, Ամենաբարեպաշտ Թագուհի, քաջառողջութիւն ամս յամայր:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԵ ՀԱՅՈՑ.
14 Նոյեմբ. 1895.